ԿԱԶՄԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՌՈՄՈՍԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

ԿԱՐԵՆ ՄԱՔԵՎՈՍՅԱՆ

Միջնադարյան Հայաստանում հոգևոր և մշակութային արդյունավետ գործունեությամբ հայտնի Հոռոմոսի վանքը եղել է նաև կազմարարական արվեստի կենտրոն։ Հոռոմոսի գրչատանը կատարված կազմարարական աշխատանքների մասին պահպանված վկայությունները վերաբերում են XIII դ. և XIV դ. կեսերին, սակայն վանքում ձեռագրեր կազմվել են նաև դրանից առաջ, մասնավորապես Հովհաննես գրչի և նկարչի գործունեության շրջանում (XII դ. երկրորդ կես)։ 1211 թ. Հոռոմոսում է կազմվել «Հաղբատի Ավետարանը» (կազմարար Աբրահամ, Մատենադարան, ձեռ. № 6288), որը անեցի Սահակ քահանայի պատվերով գրվել էր Հաղբատում (գրիչ՝ Հակոբ). Նկարազարդվել Անիի Բեխենց վանքում (մանրանկարիչ Մարգարե)։ Ձեռագրի ստեղծմանը նպատակաուղղված գործողությունների նման հաջորդականությունը վկայում է, որ Հոռոմոսի գրչատունը բավական հեղինակավոր էր կազմարարության ասպարեզում։

«Հաղբատի Ավետարանը» Հոռոմոսի գրչատան պատմությունը հարստացնում է մի ուշագրավ մանրամասնով։ Ձեռագրի խորաններից մեկի լուսանցամասում (էջ 9ա) Մարգարեն պատկերել է հոռոմոսցի կազմող Աբրահամի դիմանկարը՝ կից մակագրելով. «Կազմիչ սորին հայր [Աբրահամ և մի] ինոր՝ ի սմին յիշեսչիք»[1]։ Պատկերում Աբրահամը կրում է կապա՝ վրայից փիլոն, գլխին սրածայր հայկական վեղար է, ոտքերին կարմիր կոշիկներ։ Աջ ձեռքով բռնել է երկարակոթ խաչ, ձախով՝ կարմրակազմ Ավետարան։ Դեմքը լավ է պահպանվել։ Հոռոմոսցի կազմարարը համաչափ ե նուրբ դիմագծերով, կարճ երկճյուղ մորուքով երիտասարդ վանական է (նկ. 1)։ Հանձինս Աբրահամի պատկերի ունենք կազմարարի դիմանկար ներկայացնող ամենավաղ նմուշը հայ մանրանկարչության մեջ։

«Հաղբատի Ավետարանի» գլխավոր հիշատակարանում ձեռագրի կազմվելու մասին հայտնվում է. «Էրամանաւ հաւր Մխիթարայ կազմեցաւ ի վանքս Հոռոմոսի... Զկազմող սորին գԱբրահամ... յիշեսչիք յաղաւթս»[2]։ Ցավոք, Աբրահամի պատրաստած կազմը մեզ չի հասել. այն ձեռագրի նորոգումներից մեկի ժամանակ փոխարինվել է նորով։

Հոռոմոսում են կազմվել XIII դ. առաջին կեսի նշանավոր գրիչ և մանրանկարիչ Իգնատիոս Հոռոմոսցու ձեռագրերից շատերը։ Գրչի հայտնի ամենավաղ ձեռագրի գլխավոր հիշատակարանն ավարտվում է հետևյալ խոսքերով. «գրեցաւ ի թուիս Հայոց ՈԿԳ(1214), ձեռամբ Իգնատիոս մեղաւորի։ Աղաչեմ յիշել ի սուրբ յաղաւթս ձեր զիս եւ զծնաւղսն մեր... Արդ, որչափ ի սա գիր ստացաւղի սորա, այնչափ ապրհնութիւն յԱստուծոյ եւ ամենայն սրբոց նորա, ամէն։ Հոռոմոսի վանացն ոսկետուփ Ավետարանն եւ այս՝ մին-գրչի է գրածս»[3]։ Ինչպես տեսնում ենք, ավանդական «ամէն»-ին հաջորդող նախադասությամբ Իգնատիոսը հայտնում է 1214 թ. առաջ իր գրած մի ոսկեկազմ ձեռագրի մասին, որը գտնվում էր Հոռոմոսում[4]։ Շատ հավանական է, որ «Հոռոմոսի ոսկեկազմ Ավետարանը» հենց նույն վանքի գրչատանը կազմված լինի։

Իգնատիոսի լավագույն ստեղծագործություններից է «Բագնայրի Ավետարանը» (Մատենադարան, ձեռ № 1519)՝ գրված 1232 թ. Հոռոմոսի վանքում, իշխանաց իշխան պատրոն Խոռասի պատվերով։ Վերջինս մեծահարուստ և ազդեցիկ անձնավորություն էր՝ Իվանե ե Զաքարե Զաքարյանների քեռորդին։ Գրչությունից հետո մեծագիր և շքեղազարդ ձեռագիրը նվիրվել է Բագնայրի վանքին՝ ի հիշատակ Խոռասի հանգուցյալ կնոջ և որդու։ Որոշ ժամանակ անց ձեռագիրը գերեվարվել է, 1308 թ. փրկագնվել, իսկ XIV դ. կեսերին նորոգվել Անիի քաղաքացի Պարոնի կողմից։ Վերջինիս հիշատակարանում կան ձեռագրի նախնական զարգարվածությանը

---

1 «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (կազմեց Ա. Ս. Մաթևոսյան), Երևան, 1984, էջ 69։

2 Նույն տեղում, էջ 72։

3 Նույն տեղում, էջ 84։

4 Կ. Մաթևոսյան, Գրիչ և մանրանկարիչ Իգնատիոս Հոռոմոսցի («Բանբեր Երևանի համալսարանի», 1982, № 1, էջ 123)։

վերարկող ընորոշումներ. «Բարեպաշտ ոմն Գարոն անուն, ի մայրաքաղաքէս Անոյ, տեսի զսուրբ Աւետարանս, որ էր դրեալ և զարդարեալ ոսկւով և արծաթով մեծ պատրոնն Խաւռաս... անցեալ էր բազում ժամանակ և արծաթն և ոսկին խախտեայ էր և անգեայ։ Արդ ես մեղուցեալ Գարոնս... նորոգեցի զսայ ի հալալ վաստակոց իմոց...»[5]։ Խախտված և ընկած արծաթն ու ոսկին անկուսկած պետք է ձեռագրի կազմին պատկանեին, ինչպես ժամանակին իրավացիորեն նկատել է Գ. Հովսեփյանը։ Նա գրում է, որ Գարոնը «նորոգել է տվել ավետարանի կազմը, որովհետև Խոռասի «ոսկիով և արծաթով» զարդարած կազմը խախտված էր և ընկած»[6]։ Այսպիսով, Իգնատիոսի գրած և նկարազարդած գեղեցկազարդ մասյանը 1232 թ. Հոռոմոսում կազմվել է արծաթե կազմով (հավանորեն ոսկեջրած արծաթյա կազմով)։ Թե՞ այս, թե՞ «Հոռոմոսի ոսկեստուգ Ավետարանի» կազմերը, որոնք ոսկերչական, կազմարարական արվեստի մեծարժեք գործեր պիտի լինեին, չեն տարհանվել։

Նկ. 1

Հոռոմոսի և Անիի շրջանից մեր օրերը հասած միակ կազմը 1347 թվականից է։ Այն ամփոփում է 1325 թ. Ջենովայում Աստվածատուր քահանայի ընդօրինակած մի Ավետարան (պահ-

---

5 Գարեգին Հովսեփյան, Ցիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 891—893։

6 Գարեգին Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Երևան, 1983, էջ 89։

վում է էրմրտաժում՝ ՄՅ—834)։ Ձեռագրի և արծաթյա գրվագազարդ կազմի ուսումնասիրությամբ զբաղվել են Գ. Հովսեփյանը[7] և Տ. Իզմայլովան[8]։

Կազմի երկու կողմերում պահպանվել են դրոշմագիր արձանագրություններ, որոնք թեև որոշ հատվածներում թերի են, սակայն տեղեկություններ են պարունակում ձեռագիրը Հոռոմոսի վանքին նվիրվելու, նվիրատուների և այլոց վերաբերյալ։ Արձանագրությունն առաջին անգամ տրատարակել է Գ. Հովսեփյանը։ Կազմի առաջին երեսին դրվագված խաչելության տեսարանը շրջանակող արձանագրության վերին մասն ընկած է, մնացածը, ըստ Գ. Հովսեփյանի, հետևյալն է. «...մայ որդու Մանկայսարին եւ Ասլան խաթունին ես Ջաչո (վերջին տառը կարելի է ա կարդալ) եւ որդի իմ Ամիր Սմպատ («մայ» տառերը կցագիր են, վերջին «տ»-ն նաև հաջորդ բառի սկզբնատառն է— Կ. Մ.) տվեցաք զաւետարանս սբ. ուխտիս Հոռոմոսի, որք ընթեռնուք յաղաւթս յիշեցէք»[9]։ Կազմի լուսանկարում (նկ. 2) որոշակիորեն երևում է, որ արձանագրությունը սկըս-

Նկ. 2

վում է «...մայ» ձևով, որը «մայ» վերջավորությամբ սեռական հոլովված անձնանվան վերջն։

---

[7] Գ ա ր ե գ ի ն Հ ո վ ս ե փ յ ա ն, Մի էջ հայ արվեստի ի մշակույթի պատմությունից, Հալեպ, 1930, էջ 36—37, Նույնի, Նյութեր և ուսումնասիրություններ..., էջ 176—179։

[8] Т. И з м а й л о в а, Армянская рукопись, написанная в Генуе в 1325 г. и ее серебряный оклад 1347 г. («Византийский временник». 1961, т. 20, с. 243—258); տե՛ս նաև՝ Н. С т е п а н я н, Декоративное искусство средневековой Армении, Л., 1971, с. 49—50, илл. 153—154.

[9] Դ ա ր ե գ ի ն Հ ո վ ս ե փ յ ա ն, Նյութեր և ուսումնասիրություններ..., էջ 178։

մաս է (Վահրամայ, Ասպրամայ, Վռամայ և այլն)։ Գ. Հովսեփյանը արձանագրության մեջ նշելով Ջաչռ կամ Ջաչս, շարադրանքում նվիրատու հոր անունը գրում է Ջաչուռ[10], որն այդպես էլ կիրառվել է հետագա ուսումնասիրողների կողմից[11]։ Սակայն արձանագրության մեջ գրված է «Ես Ջաչս», ուստի կարծում ենք նպատակահարմար է անփոփոխ թողնել անվան բնագրային ձևը, մանավանդ, որ Ջաչն ունեցել է Ջաչուռ անվանից միանգամայն անկախ կիրառություն[12]։ Կազմի երկրորդ երեսին, «Տիրամայրը մանկան հետ» պատկերի մոտ եղած արձանագրությունը վերաբերում է Հոռոմոսի վանականներին և արհեստավոր ոսկերչին։ Դարձյալ գրված է որպես գրվագապատկերի շրջանակ՝ սկսվելով վերին ձախ անկյունից. «Ստեփանոս... [Սար]գիս կրան[աւ]որս յիշեցէք յաղաւթս մք[աղաչեմք]»։ Աստվածածնի պատկերից վեր նշված է կազմի պատրաստման թվականը՝ ՉՂԶ (1347), իսկ գահավորակից ներքև գրված է ոսկերիչ կազմարարի հիշատակագրությունը. «Զմեղուցեալ ոսկերիչս Գրիգոր յիշեսցէք»[13]։

Արձանագրության սկզբում հիշատակված Ստեփանոսն ամենայն հավանականությամբ Հոռոմոսի վանահայրն է, որի մասին տեղեկություն կա նաև վանքի Ս. Հովհաննես եկեղեցու ներսի 1336 թվակիր մի վիմագիր արձանագրության մեջ. «...[ի]յառաջնորդութեան հաւր Ստեփանոսի»[14]։ Վերջինս Հոռոմոսի առայժմ հայտնի միջնադարյան վերջին վանահայրն է[15]։

Ուշադրության է արժանի մեկ այլ հանգամանք ևս։ Նույն 1336 թվակիր արձանագրությունը (որ խոսվում է Վահրամ աթաբեկի կողմից վանքի ունեցվածքի վերականգնման մասին) սկսվում է հետևյալ կերպ. «... Ես Վարհամ աթապակ պարոնաց պարոն, որդի Իւանի, թոռն մեծին Շահ-Նշայի որդի ամիրսպասալար Զաքարիայի...»[16] և ավարտվում է՝ «սպասաւորք սբ. Յովանիսի հատուցին ամեն ամի ժ աւր պատարագ։ Եւ ինձ։ Եւ իմ նախնեացն. ի տէրութեան Վարհամա... յառաջնորդութեան հաւր Ստեփանոսի»[17]։ Կարծում ենք, որ այստեղ հիշատակվում են երկու տարբեր Վարհամ, և եթե առաջինը Զաքարյան Վահրամ (կամ Վարհամ) աթաբեկն է, ապա երկրորդը Հոռոմոսի շրջանի անմիջական տերն է։ Հոռոմոսի մեկ այլ, անթվական արձանագրության մեջ օրինակ հանդիպում ենք՝ «ի հայրապետութեան տէր Սարգսի եւ ի աէրութեան վանացս Գրիգորոյ, Սմբատայ, Վահրամայ...»[18]։ Թվում է, որ 1336 թ. արձանագրության երկրորդ Վարհամը, նույն վանահայր Ստեփանոսի հետ 1347 թ. հիշատակված Մանկասարի և Ասլան խաթունի որդին է[19]։ Հիրավի, վերջինս բավական կարևոր անձնավորություն պետք է եղած լիներ, որպեսզի կազմի արձանագրության մեջ նվիրատու Ջաչը հիշատակեր նրան ու նրա ծնողներին, այն դեպքում, երբ անդամ իր ծնողներին չի հիշատակում։

Գրիգոր ոսկերչի պատրաստած արծաթյա կազմն ուշագրավ է իր արվեստով և պատկերագրությամբ։ Ներկայացված տերունական տեսարաններն ակնհայտորեն կապվում են պատկերագրական հին ավանդների հետ։ Խաչելություն հորինվածքի մասին Գ. Հովսեփյանը գրում է. «Ոսկերչական գործը, թեև ԺԴ դարու վերջերին է, բայց նորան օրինակ ծառայող պատկերագրությունը շատ ավելի հին է... Մարիամի և Հովհաննու տիպերը, հրեշտակների անդրիները, խաչեցյալի մարմնի դիրքը, բոլորը մատնանշում են մեր ԺԱ դարու մանրանկարչության մեջ ընդհանրացած երևույթները, որոնց ծագումը Թ—Ժ դար կարելի է տանել»[20]։ Տ. Իղմայլյան մասնավորեցնելով սույն դիտողությունը, կազմի խաչելության տեսարանը համեմատում է «Մողնու Ավետարանի» (Մատենադարան, ձեռ. № 7736) համապատասխան մանրանկարի հետ, շեշտելով

10 Նույն տեղում, էջ 177—178։

11 Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ., Երևան, 1956, էջ 108, Թ. Հակոբյան, Անիի պատմություն, հ. Բ, Երևան, 1982, էջ 323։

12 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 295։

13 Գարեգին Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ..., էջ 179։

14 Ն. Սարգսյան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Սեւ Հայս, Վենետիկ, 1864, էջ 159։

15 Ա. Մխիթարյանի Հոռոմոսին նվիրված աշխատության մեջ վանքի վերջին առաջնորդ է համարվում հայր Վահանը՝ հիշատակված 1326 թ. (Ա. Մխիթարյան, Պատմութիւն Հոռոմոսին վանաց ի Շիրակ, Վաղարշապատ, 1870, էջ 21)։ Ինչպես տեսնում ենք, Վահանին հաջորդել է Ստեփանոսը, որը հիշատակվում է 1336 և 1347 թվականներին։

16 Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 158 (այս և հաջորդ մեջբերված հատվածներում եղած բնագրային ընդգծումները մերն են— Կ. Մ.)։

17 Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 159։

18 Նույն տեղում։

19 Գարեգին Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ..., էջ 178։

20 Նույն տեղում։

առկա ընդհանրությունները։ Նկատենք, որ վերոհիշյալ հորինվածքը կառուցվածքով բավական մոտ է նաև Իգնատիոս Հոռոմոսցու 1236 թ. առաջ նկարազարդած մի ավետարանի նկարագրությունն մանրանկարին (Նոր Ջուղա, Ամենափրկիչ, № 36, էջ 8բ)։

Կազմի երկրորդ երեսին ներկայացված է Օդիգիդրիայի պատկերագրական հորինվածքը, ուր ցանցադրած գահավորակին բազմած Տիրամայրն է՝ մանուկ Հիսուսը գրկին։ Դրոշմապատկերի չորս անկյունամասերում շրջագծերի մեջ պատկերված են չորս ավետարանիչները, վերևում Մատթեոսը և Մարկոսը, ներքևում՝ Ղուկասն ու Հովհաննեսը։ Պատկերներն ուղեկցված են համապատասխան մակագրություններով։

Ջաշի և Ամիր Սմբատի պատվիրած կազմը, ըստ Գ. Հովսեփյանի, «ծագմամբ Անիից պետք է համարել, որովհետև նվիրված է մերձակա Հոռոմոսի վանքին»[21]։ Տ. Իզմայլովան նշում է, որ իր կատարած հետազոտությունը «թույլ է տալիս խոսել եթե ոչ կազմարարական որոշակի դպրոցի, ապա արվեստանոցի մասին, որը գտնվել է Հոռոմոսի վանքի շրջանում»[22]։ Ինչպես վերը տեսանք, Անիի մերձակայքում հենց Հոռոմոսի վանքն էր հայտնի իր վարպետ կազմարարներով, որոնք նաև արծաթյա կազմեր էին պատրաստում։ Մեր քննած կազմի պատկերագրությունը վկայում է, որ այն կազմարարական գործի հիմնավոր ավանդներ ունեցող գրչատնից է սերում։ Պատահական չպետք է համարել նաև Հոռոմոսի միաբանների ու վանքի հետ առնչվող անձանց (Ստեփանոս, Սարդիս կրոնավոր, Մանկտսարի և Ասլան խաթունի որդի [Վարհ]ամ) մանրամասն հիշատակումը կազմի արձանագրության մեջ։ Գրիգոր ոսկերիչն այդ միջավայրին մոտ կանգնած մեկը պետք է եղած լիներ։

Ավելացնենք, որ XIV դ. 40-ական թվականները, դատելով ժամանակի ձեռագրերի հիշատակարաններից, համեմատաբար խաղաղ տարիներ են եղել Անիի համար։ Ջաքարյան Վահրամ աթաբեկի կարգադրությամբ նրա Ասիլ գործակալը նորոգել է քաղաքի Ս. Փրկչի տաճարի գմբեթը (1342), կատարել շինարարական այլ գործեր[23]։ Անիի մերձակա Հոռոմոսի վանքը, բնականաբար, նույնպես հոգևոր և մշակութային կյանքի որոշ աշխուժացում է ապրել, որի մասին վկայում են այդ շրջանի վիմագրերը և ձեռագրական մշակույթի հուշարձան 1347 թ. արծաթյա կազմը։

Այսպիսով, 1211 թ. «Հաղբատի Ավետարանի» (պատվիրատու՝ Սահակ, կազմարար՝ Աբրահամ), 1232 թ. «Բագնայրի Ավետարանի» (պատվիրատու՝ պատրոն Խոռաս) կազմերի մասին եղած տեղեկությունները և 1347 թ. կազմը (պատվիրատուներ՝ Ջաշ և Ամիր Սմբատ, կազմարար՝ Գրիգոր), լրացնելով մեր գիտելիքները Հոռոմոսի գրչատան մասին, թույլ են տալիս այն դասելու միջնադարյան Հայաստանի կազմարարական կենտրոնների շարքը։

ПЕРЕПЛЕТНОЕ ДЕЛО СКРИПТОРИЯ МОНАСТЫРЯ ОРОМОС

КАРЕН МАТЕВОСЯН

Резюме

Монастырь Оромос (близь Анн) является одним из известных армянских средневековых центров копирования рукописей. Там же значительного уровня достигло и переплетное искусство. В Оромосе в 1211 г. было переплетено Ахпатское Евангелие (ММ № 6288), написанное и иллюстрированное в других монастырях. Среди миниатюр этой рукописи сохранился портрет Оромосского мастера—переплетчика Абрама.

В Оромосе были переплетены многие рукописи переписчика и миниатюриста Игнатиоса («Оромосское Евангелие Воскетуп», «Багнайрское Евангелие»). К сожалению, эти переплеты не дошли до нас, но как сообщают памятные записи, они были сделаны из серебра и золота. Единственный сохранившийся серебряный оклад из района Оромос был сделан ювелиром Григором в 1347 г. по заказу некоего Джаджа и его сына Смбата (ныне хранится в Эрмитаже, УЗ-834). Исследование чеканных изображений на досках оклада выявляет архаичность каноничных мотивов, доказывая тем самым устойчивость художественных традиций переплетной мастерской Оромоса.

21 Գ ա ր ե գ ի ն Հ ո վ ս ե փ յ ա ն, Նյութեր և ուսումնասիրություններ..., էջ 178։

22 Т. Измайлова, նշվ. աշխ., էջ 58։

23 Կ. Ա. Մ ա թ ևո ս յ ա ն, XIV դարի հիշատակարանները Անի քաղաքի և անեցիների մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 3, էջ 111—114)։